

քան վե՛հ պաշտօն է սահմանում հրապարակագրութեան, որի մէջ այսօր շատ սուտ մարգարէք և կեղծ ու անարժան առաքեալներ են գործում: որոնց անհետ կորուստը նոյնքան հաւաստի է, որքան և սուտ մարգարէից և կեղծ առաքեալներինն է եղել:

ԲՈՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բողարական օրթոդոքս եկեղեցին, որ այժմ ունի իւր սեփական աղգային պատրիարքութիւնը, որի գլուխն իսկապէս էլէւէս է կոչուում այս տարի տօնեց իւր անկախութեան 25-ամեայ յօբելեանը: Տօնախմբութեան մասնակցել են երկրի իշխանից սկսած մինչև վերջին գիւղացին: Սօփիա քաղաքի խորհրդարանը ի յիշատակ յօբելեանի հիմնել է մի որբանոց, իսկ բողարական սինօդը թողակներ է նըշանակել բարձրագոյն հոգևոր կրթութիւն ստանալ ցանկացողների համար:

Յ. ԱՆԳԼԻՒԱԿՆ ԵԿԵՂԵՑԻ

Քէնտրբուրիի արքեպիսկոպոսը մի բաց նամակով բողոքել է Լեոն ԺԳ. պապի այն ջանքի գէմ, որով կամենում է կրկին կապ հաստատել անգլիական և պապական եկեղեցիների մէջ: Վատիկանի շրջանների այն կուսակցութեան վերայ, որ չէ համակրում պապի միաբարական ձգտումներին, այս շրջաբերականը մեծ տպաւորութիւն է գործել: Եյսու ամենայնիւ պապը վճռել է հրատարակել այն կոնգակը, որով պիտի Անգլիացոց հրաւիրէ ս. Պետրոսի փարակը: Եյս թուղթը պէտք է Անգլիական կաթողիկոսներին ուղղուած մի շրջաբերականի ձև ունենայ: Պապն այժմ՝ եռանդով աշխատում է այդ թղթի խմբագրութեան վերայ, որ երևի մի անուղղակի պատասխան կը լինի Քէնտրբուրիի արքեպիսկոպոսին:

— Մեծ պատի ընթացքում անգլիական եպիսկոպոսները սովորութիւն ունին շրջաբերական կոնգակներով գիմել իրենց հօտին և ժամանակին յարմար խրատներ կարգաւ: Եյս սովորութիւնը, որ շատ հին է և գոյութիւն ունի բոլոր հնագոյն եկեղեցիներում, այժմ ամենից յաճախ գործ է գրուում կաթողիկ և անգլիկան եպիսկոպոսներից: Անցած մեծ պատին Եօրքի արքեպիսկոպոսն իւր շրջաբերականում մի քանի խրատներ տալուց յետոյ՝ մտքերի և սրտերի բարոյական հանգստութեան համար խորհուրդ է տալիս մի առ ժամանակ հեռու մնալ օրական բորբոքուած խնդիրներից և խոյս տալ դրանց մասին հրատարակուած յօդուածներ և գրքերի ընթերցումից:

Ն. Բ.



ԳՐԱԿԱՆԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

• Ի ՄՈՎՍԻՍԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ •

(Յաւելուած Արարտի Բ.)

Հայոց նախնի պատմագրութեան մի քանի յիշատակարանները նոյնութեամբ հասած չեն մեզ: Ազաթանգեղոսի պատմութիւնն իւր սկզբնական խմբագրութիւնից զանազանուում է իւր յաւելումներով և յապաւումներով: Փաւստոսի պատմութեան սկիզբն և վերջը թերի է: Եղիշէի պատմութեան գրքից պակասել է մի ամբողջ շրջանի նկարագիր, որն երբեմն գտնուել է նորա մէջ, (մենք առիթ կունենանք մի այլ անգամ այս մասին մանրամասն խօսելու): Նոյն վիճակին է հանդիպել և Մովսէս Խորենացու պատմութիւնը: Կան շատ ցուցումներ, որոնցից երևում է, որ Մովսէսի պատմութիւնը թերի է հասել մեր ձեռքը: Նախ որ այդ գիրքը բազկացած է եղել չորս դարութիւնից, իսկ մեզ հասել է միայն երեքը: Երկրորդ որ Մովսէս իւր պատմութիւնը գրել է ակսեալ յԱզամայ մինչև ի կայսր Զենոն², այսինքն մինչև 491 թուականը: մինչդեռ այժմեան նորա գրքի պարունակութիւնն է Ազամից մինչև Ս. Թարգմանիչների մահը՝ այն է 440 թուականը: Երրորդ որ արդէն յայտնուել է նորա պատմութեան կորած մասերից մի հատուած՝ այն է Տրդատ արքայի յուղարկաւորութեան նկարագիր, որի մասին տեղեկութիւն է տալիս Թովմա Արծրունին³ և որն հրատարակուեցաւ 1851 թուին Վենէտիկի Բագմալէպուս: Եւ չորրորդ՝ որ Խորենացու պատմութեան երրորդ գրքի մէջ պակաս է Մուշեղ և Մանուէլ Մամիկոնեան զօրավարների եօթնամեայ ժամանակի նկարագիրը, որ մանրամասն հաղորդում է Փաւստոս քանի որ Մովսէսի պատմութեան բովանդակութիւնը, թէև այլ ոգւով պատմած, համաձայն է Փաւստոսի պատմութեանը, անշուշտ, նոցա երկուսի բովանդակութեան մէջ երեւցած տարբերութեան պատճառն այն է,

1. Տես Թովմա Արծրունի, պատմութիւն, եր. 9 և 76 Ս. Պետերբուրգ. տպ.

2. Նոյն եր. 76.

3. Նոյն եր. 58.

Ներկայ հատուածիս մէջ կան ուշադրութեան արժանի տեղեկութիւններ, որոնք Հայոց գրականութեան յիշատակարաններում որքան գիտենք, սակաւածանօթ են և հաղուագիտու։ Առաջինն Ամասիա քաղաքի պատմութիւնն է, մեր հատուածի մէջ պարունակուած տեղեկութիւններն Ամասիայի նկատմամբ ճշմարտութիւնից հեռու չեն և համաձայն են օտար աղբիւրների ցուցումներին¹։ այսօր իսկ կան և մնում են Ամասիայի քարակտուր սենեակները, որոնք եղել են երբեմն թագաւորական դամբարաններ և «գանձուց» տներ, նոցա ճշգրիտ նկարագիրըն արել է Հ. Սարգսեանը², որին ծանօթ է Ս. Թէոդորոսի վկայաբանութեան այս հատուածը։ Ամասիայի մասին երգել է և Մարտիրոս Ղրիմեցին ժե. գարում (տես Նոր յոդովածու. Ա. պրակ)։ Հին Պոնտոսի թագաւորների մայրաքաղաքն Ամասիա գտնուում է իրիս³ (այժմ Եշիլ իրմակ) գետի վերայ, որը միանալով Գայլ գետի հետ, թափուում է Սև ծովի մէջ այն տեղում, ուր էր հին Ժամանակ Թէմիսկիւս (մեր հատուածում Սկիռիոն) դաշտավայրն և Թերմոդոն գետի բերանը։ հին Պոնտոսի ծովեզերեայ ամենագեղեցիկ վայրերից մէկն է եղել այդ Ըստ աւանդութեան Ամասիա քաղաքն հռչակաւոր յոյն աշխարհագրի Ստրաբոնի ծննդավայրն է։ Այդ քաղաքի հիմնարկութեան Ժամանակը ծանօթ չէ մեզ, յայտնի է սակայն, որ Աղէքսանդր Մակեդոնացու տիրապետութիւնից շատ յառաջ գոյութիւն ունէր այդ քաղաքը, հետեւաբար Եքտառէի (ըստ այլոց Նեքտառէի, Նեքտանքեսի) եղբոր Ամասիայի պատմութիւնը մի առասպել է երևում։

Պոնտոսի այն գաւառը, ուր գտնուում է Ամասիան, հին Ժամանակ կոչուում էր Լինոպոնտոս, որ մեր հատուածումն Շղինոս Պոնտոս կամ Լինոս Պոնտոս է գրուած։ Ք. Պատկանեան Լինոպոնտոս անունը բացատրելու Ժամանակ առում է, որ մեծ կոստանդիանոս իւր մօր Հեղինէի պատուի համար Սուգա քաղաքը վերակոչեց Լինոպոնտոս⁴։ Թէ որքան կապ ունին այդ քաղաքի և գաւառի կոչումներն իրար հետ, դժուարանում ենք

ասել, մեզ համար նշանաւորն այն նախնական ուղղագրութիւնն է, որ Լինոպոնտոս անունը համար պահուած էր մեր հատուածում։ Ամասիայի առումից յետոյ Պոմպէոս կանգնում է Պոմպիւպոլիս քաղաքը, որ գրանուում էր Պոնտոսի սահմաններից դուրս Ալիւս գետի Ամնիաս վտակի վերայ, այդ քաղաքի կանգնելովն Ամասիան չի ընկնում այլ մնում է Լինոպոնտոսի մայրաքաղաք։ «Վամասիա կալեալ ի նախագահութեան» ղեղինոս Պոնտոս Նեոտրապոլիս (մեոտրապոլիս) արարեալ⁵։

Ամասիա քաղաքից զատ հատուածիս մէջ երկու անգամ յիշուած է Կեսարիայի անունը, սակայն այդ միւսնոյն տեղի անունն չէ, մէկը հին Մաթաբ (Միթաբ, Միթակ) արգի Ղայսարի քաղաքն է, իսկ միւսը Պոնտոսի Կիւարա գիցաւանն է, որի տեղ հանդէս եկաւ Նէոկեսարիա արգի Նիկսար քաղաքը։ Ամասիայի եղիսկոպոս փեղեմէոսն այս քաղաքի վերայ եպիսկոպոս ձեռնագրեց 240 թուին Ս. Գրիգոր Սբանչեւագործին¹, իսկ թէ ինչպէս է, որ հատուածի մէջ փեղեմէոսին ձեռնագրողը Ս. Անդրէաս առաքեալն է, այդ սխալմանը կարելի է բացատրել նորանով, որ կարող են պարբերութեան մէջ տողեր պակասած լինել։

Գալով հատուածիս այն մասին, որ վերաբերում է իսկապէս Ս. Թէոդորոսի կեանքին, պէտք է ասել, որ նորա բովանդակութիւնն արդէն ծանօթ է Հ. Ագեբեանի Լիակատար Վարք Սրբոց գրքի², սակայն Ագեբեանը, քաղուածաբար առնելով զանազան հոյ և օտար ճառընտիրներից, խմբագրել է Սրբոց Վարքը գրէթէ իւր բառերով, շատ հաղիւ նա բառացի քաղուածներ է անում ճառընտիրների բնագրից։ Ս. Թէոդորոսի վրկայաբանութեան մի մասը բարեբաղդաբար ճառընտիրների բառերով է խմբագրուած, ուստի և ամէն ոք կարող է բաղդատութիւն անել, օգտուելով նախ մեր առաջարկած հատուածից և երկրորդ վենէտիկի վկայաբանութիւնից (Ա. եր. 545), որոնք երկուսն էլ բնագիր են։ Թէ ուստի են կազմուած այդ բնագիրները, թարգմանութիւն են թէ ինքնուրոյն գործ, այդ թողնում ենք աւելի ձեռնհաս բանասէրներին լուծելու, մեզ մնում է միայն յիշատակել, որ Հ. Ագեբեանն օգտուել է նաև Ս. Գրիգոր Նիւսացու ճառից³, որի բնագիրը մեզ ծանօթ չէ։

1. E. Meyer, Gesch. des Königreichs Pontos' Leipz. 1879.

2. Տեղագրութիւն ի փոքր եւ ի մեծ Հայս, Հ. Ներսէս Սարգսեան, Վենէտիկ 1864:

3. Ըստ Յովհ. Կաթ. ՌԻՄ փետ, որ մեր հատուածում է ՈՐԷ, Թերես երկաթագիր ՌԷ գրուածքից աղծատուած մի գրութիւն։

4. Армянск. География VII 16.

4. Фарраръ, Жизнь. Св. Отцов.

2 Տա. 1811 Թ. Վենէտիկ տես Հատ. Բ եր 532:

5 Տես Հայկ. Թարգմ. Նախն. երես 572 վերնագիր եւ սկզբի տողեր։

Ս. Թէոդորոսի յիշատակն Հայոց եկեղեցին կատարում է մեծ պատի տալին շաբաթ օրը՝ շարականներից նոյն օրուայ Մանկունքը նուիրում է Ս. Թէոդորոսին՝ շարականը բաղկացած է երեք անից, երկրորդ տան մէջ հատուածին համեմատ յիշուում է վիշապին սպանելը, իսկ երրորդի մէջ Վենէտիկի վիշապաբանութեան համեմատ կռատան հրդեհելը՝ Թէ ո՛վ է երգելը, հայերէն վիշապաբանութեան և շարականի հեղինակների մէջ կայ արդեօք նոյնութիւն, թէ տարբեր անձինք են, չենք կարող ասել։ Թէպէտև ձեռագիր շարականների մէջ շատ չենք հանդիպում Ս. Թէոդորոսի շարականին, այնուամենայնիւ Ժն. դարու մի ձեռագրի մէջ պատահել է մեզ կարգալ այդ երգը։

Հայ ժողովրդի մէջ մի ծէս է մնացել, որ կատարուում է Ս. Թէոդորոսի տօնի օրը, այդ է հատիկ (վրացերէն ծանտիլ) բաժանելու սովորութիւնը։ Մեզ ծանօթ չէ թէ ժողովրդի մէջ ի՞նչ աւանդութիւն կայ այդ մասին։ Սակայն ճառքնորի մէջ մի համառօտ պատմութիւն կայ, որից երևում է որ երբ Յուլիանոս ուրացողը կամենում էր մայրաքաղաքի քրիստոնեայ ժողովրդին բռնութեամբ զոհի միս ուտեցնել, Ս. Թէոդորոս տեսիլքի մէջ երևեցաւ ժամանակի պատրիարքին և պատուիրեց, որ աղքատ ժողովրդին այն օրը խաշած ցորեն բաժանեն (կուլիրա) իրրեւ կերակուր. այդ տեսիլքին համեմատ յունաց մէջ սովորութիւն դառաւ ամէն տարի Ս. Թէոդորոսի օրը կուլիրա կամ հատիկ բաժանել։ Հատիկի սովորութիւնն այսպիսով յոյներէն է անցել Հայոց մէջ, թէ ունի և մի տեղական պատճառ, շատ հետաքրքիր կը լինի պարզել ժամանակին։

Ըստ Աւգերեանի՝ Ս. Թէոդորոսի նահատակութեան օրը 305 թուի փետրվարի 17 է։

Կ. Կ.



ՎՐԸՅ ԴԱՐՁԻ ՊԼՏՄՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԸՆՈՅՑ.

(Յաւելում Արարատի Գ.)

Արարատի անցեալ տարուայ մայիս տօնի համարում հրատարակելով ճառքնորի մէջ գտնուած խորհնացու պատմութեան մի հատուած, որ զգալի կերպով տարբերում է սովորական բնագրից՝ մենք այն կարծիքն էինք յայտնել, թէ գուցէ ճառքնորի կազմողները ուրիշ կերպ խմբագրուած մի պատմութիւն աչքի առաջ ունէին, որ աւելի ճիշդ էր և նախնական քան մեր ձեռք հասածը և վեր-

ջինս խմբագրողի համար իրրեւ գլխաւոր աղբիւր էր ծառայում։ Արարատի սոյն համարի հետ լոյս են տեսնում երկու նոր հատուածներ, որոնք կարծես աւելի ևս հաստատում են այդ ենթադրութիւնը։ Այդ երկու հատուածները վերնագրի համաձայն խորհնացու պատմութիւնից պէտք է արտագրուած լինին, բայց նոցանից մէկը ամենեւին չէ գտնուում մեզ ծանօթ պատմութեան մէջ և միւսը զգալի կերպով տարբերուում է համապատասխան կտորից։ Վերջինս մասնաւոր հետաքրքրութեան արժանի է կրկին, ինչպէս և անցեալ տարուց հրատարակածը, այն պատճառով, որ սա ևս խորհնացու պատմութեան այն տեղերից է, որոնց վերայ հիմնում է ուսուցչապետ Կարիէր իւր կարծիքը այդ գրքի անվաւերականութեան մասին։ *

Կարիէրի կարծիքով խորհնացու գրքի իսկական հեղինակը Վրաց գործի պատմութիւնն անելիս օգտուել է գլխաւորապէս Սոկրատի պատմութեան հայերէն թարգմանութիւնից, իսկ այդ թարգմանութիւնը եղել է 690 — 692 թուականներին, որից հետեւում է, որ խորհնացու պատմութիւնը ամենաւաղ է. գործի վերջերին պէտք է գրուած լինի։ Սոկրատի հայերէն թարգմանութիւնը, ինչպէս յայտնի է, մամուլի տակ է արդէն Մայր Աթոռի տպարանում՝ Արթ. Մեսրոպ վարդապետի հրատարակութեամբ։ Թողնելով որ նորա վերաբերեալ խնդիրները և մասնաւորապէս խորհնացու հետ ունեցած առնչութիւնը այդ հրատարակութիւնից պարզուին, առայժմ մենք միայն այսքանը կնկատենք, որ Սոկրատի 2 հայերէն թարգմանութիւն կայ՝ ընդարձակ և համառօտ՝ ընդարձակը, գոնէ մեր ի նկատի ունեցած կտորի մէջ, ոչ մի յարաբերութիւն չունի խորհնացու հետ, Կարիէրի ցոյց տուած նմանութիւնները միայն համառօտին են վերաբերում և տրգարեւ կան այգալիսի ակնյայտի նմանութիւններ։

*) Սկսուածքի 2 բառերը՝ «կին ոմն», նոյն են ոչ միայն խորհնացու և համառօտ Սոկրատի, այլ նաև ընդարձակի կամ յունարէն բնագրի մէջ. սակայն կարեւորն այն է, որ այդ բոլորից տարբերում է մեր հատուածի սկսուածքը՝ ունենալով այնպիսի մի ձև, որ չէ կարող ճառքնորի կազմողի շարադրալը լինել, այլ նոյն, թեամբ աւնտած պէտք է լինի մի ամբողջական պատմութեան միջից. իսկ երանելոյն Նունէի բառերով մի անկախ պատմութիւն սկսել ոչինչ միտք չունէր։